— Շան վորդի «լիփիկներ»...

Այդ պահին ճաշտրան մտավ ինժեներ Պարդան
Սիսակյանը: Տեսներիվ այդ, նա ժպատց քթի տակ և
արագ քայլերով զեսի այն կողմը դիմեց:

— Սա ի՞նչ ե... ի՞նչ եմ տեսնում, աղերք .. Հայ-
րական հանդիմանությամբ դիմեց նա յիրկու կովող
բանվորներին:

— Ամոթ ե... ամաչեք...

Շարունակեց իր մեղմ հանդիմանությանն ու
յերկուսի ձեռքերից ել բանելով՝ քաշեց մի գատարկ
սեղանի մոտ:

— Հիմա յես սրանց կըարիշացնեմ.. ծիծաղկոտ
տուավ նա շրջտպատի բանվորներին, վորոնք արդեն
յրիվ եյին զալիս: Սեղանի մոտ Սիսիկյանը ծխախոտ
առաջարկեց յերիտասարդներին, վորոնք, առանց քաշ-
վելու վերցրեն մի հատ և իրար խեթ-խեթ նայե-
լով՝ վառեցին: Հետո Սիսակյանը գլխավ նշան արավ:
Յերկու գլուխները միացան նրա զլմին:

Նրանց մեջ տեղի ունեցավ վայրկենական խոր-
հրդավոր մի խոսացկություն:

6.

Ովքեր ելին այդ յերիտասարդները: Թերևս հարկ
կա յերկու խոսքով ծանոթացնել նրանց՝ ընթերցողնե-
րի հետ: Սրանք իրենց խուլեղանական արարքների

համար գործարանի բանվորների կողմից ստացել ելին «ԷՌՆԴՈՆԻ ԼԺՄԻԿՆԵՐ» մականունը: Յեթե կարիք եր ինում հիշելու մեկն ու մեկին, նրանք ասում եյին «առաջին լփրիկ» կամ «երկրորդ լփրիկ»: Մենք եւ այդպես կկոչենք այդ լփրիկներին»:

Բաց եմ անում եկրանը, վորի վրա դուք պետք ե տեսնեք իսկական «ԷՌՆԴՈՆԻ լփրիկներ»-ին:

Գիշեր եր:

Հուսինն իր կավճագույն շողերը սփռել եր նիր. հող քաղաքի վրա:

Հեռավոր արվարձաններից լովում եյին շների հատ ու կտոր կլանչոցներ, իսկ հետո ափում եր լուս-թյուն:

Հեռնաւ, հեռու բարձրագիր պատերին բաղսվելով՝ արձագանք տվեց գործարանի սուլիչը: Յերբորդ հերթն ազատվում եր աշխատանքից: Դորժարանի շրջապատն ընկալ ուրախ լեռ ու զեռի մեջ: Այդ ել լուեց, Քաղաքում ելեկտրոկալանից ծանր փնչոցներ ելին լովում: Մի յերիտասարդ բանվորունի անցավ ծառուղին և դուրս յիկավ գործարանի բակից: Նրանից մոտ հիսուն քայլ հեռավորության վրա քայլում ելին մեզ նախածանոթ «լփրիկները»: Նրանք ծիծաղում ելին անկանոն բարձրաձայն ու յերեմն ել անպատճառ խոսքեր շպրտում առջևից քայլող աղջկա հասցելին: Աղջիկը շուտ շուտ շուրջն եր նայում, յերեկի փրկության համար մի կողմնակի անձնավորություն փնտրելով: Նա ուզում եր զարնալ, ապտակել յերիտասարդներին, բայց քաջությունը չեր ներում, նա ուզում եր արտգ քայլեր բայց ճանապարհը լերկար եր ու լուս և ճանապարհի վրա մութն եր:

— Անուշ ջան, մի վախի...
— Մենք բանվոր, դուք բանվոր... դասակարգա-
յին տեսակետից...

Աղջիկը համարյա վազում եւ նրա սիրտն ինչ վոր վատ բան եր դուշակում: Յերիտասարդները հասնում եյին նրան: Նրանք այլևս չեյին խոսում, յերկուսի մոռով ել նույն բանն եր անցնում: Յերբ հասել ելին փողոցի ամենամութ անկյունը, աղջիկն զգաց, վոր մեջքն ողակվեց: Նա ճշած հուսահատ:

7.

Մի անգամ վարդան Սիսիկանի հասցեյին թքո-
թակցություն եր լուս տեսել տեղեկան լրագրում:
Արտաքուստ վոչ վոք չեր կարող նկատել, վոր թղթա-
կցությունը տհաճ տպավորություն ե գործել ինժենե-
րի վրա: Բայց ներքուստ վեհեխնդրություն բորբոքող
կայծն ալբում եր նրա սիրտը: Նա վորոշեց անպայման
վրեժինդիր լինել թղթակցից, թեև զժվար եր զիտե-
նալ նրա ով լինելը: Այնուամենայնիվ ինժեների վո-
րոշումն իկատար ածվեց մեզ նախածանոթ «ԷՌՆԴՈՆԻ
լփրիկների» ձեռքով:

Արսեն, Սենո, մոտս լեկեք..., հետևյալ յերեկոյան
նրանց իր մոտ կանչեց ինժեները:

Արսենն ու Սենոն կնացին:

— Գտել եմ... պետք եմ... հասկանում եք:

Յեկ ինժեները բոունցքը ցուց տվեց: «Լփրիկ-
ներից» մեկը մի կողմ թքեց սպառնալից: Մյուսը՝
մյուս՝ կողմ, ի նշան համաձայնության, այնունետև
ամեն մեկը հնդկական սուբլի ստանալով ինժեներից՝
սուբլով առաջ անցան:

Հետնկալ առավոտ թղթակցին արյննը լաղաքով
հիվանդանոց տարանու

Ահա այս հերոսների՝ գլուխներն ելին, վոր
միացան Վարդան Սիսիկյանի գլուխն ճաշարանում:

8.

Վայրկյանական խորհրդավոր լոռեթլունից հետո
Սիսիկյանը, նախ՝ մեկի և ապա՝ մյուսի ափերի մեջ
սահեցրեց տասական ոռորլի:

— Փոքր ինչ առաջ զնաց, հասնենք, — վսփսաց
նա հուշիր:

Իրենց ափերի մեջ զգալով փողի ներկայությունը՝ խուլիգանները յերկուսն ել միաժամանակ, ի
նշան ուրախության, թքեցին հատակին և գոտքի յի-
լան:

- Ամեն ինչ առածիս նման, հասկանում եք...
- Թքել եմ...
- Մի մուշտիով

Ու սրան, նրան հրելով, նրանք կուրս լեկան:

9.

Անձրել մաղում եր իր ձանձրակի յերգը փողոց-
ներում: Զրատար խողովակներից ջուրը մայթերին եր
թափվում:

Մութ գիշեր եր: Մարդկային անց ու դարձը
դադարել եր փողոցներում:

Յերբեմ մի թքաջած կառը ձեղքում եր փողոցի
կաշկանդիչ ցելին ու անհետանում փողոցի ծալքամա-
սերում: Քամին սրաբշավ արշավում եր անձրեածեծ

քաղաքով: Անձրեի կաթիլները քշվում ելին ու ավելի
թեք խփում հանդիպակած պատերին:

Սակայն բնության այս խոռվությունը մազաչափ
անզամ չեր ընկճում Արմենյանին: Նրան յերջանիկ
մտքերն ելին ողակել, նա ժպտում եր քամու խելա-
գար սուլոցների ներքո: Նրա առաջ պայծառ արեի
նման կանզնած եր գյուտի փայլուն ապագան:

Շուտով կընդունվի նրա զյուտը: Արդ զյուտը
հազարակոր բանվորների կազմախի ձեռքի դժվարին
աշխատանքից:

— Իսկ յեթե չենդունեն... վճնց թե, ի՞նչ պի-
տի պատճառաբանեն: Մեքենան հնարժած և, զյուտը՝
ոգտակար գործարանի համար: Վաչ վաչ, բոլորովին
ավելորդ և կասկածում նա: Նորից ժպտաց և ուշա-
դրություն շգարձնելով քամուն և անձրեին՝ մտամոլոր
քայլերով շարունակեց անցնել մայթերը:

Մինչև տուն դեռ բավական ճանապարհ կար անց-
նելու Ո՛, այդ ճանապարհն ինչու չի կարճանում,
վորպեսզի Հրաչյան շուտ տուն հասնի և իր անսպա-
սելի ուրախությանը մասնակից անի նաև Հրանուշին:
Նա արագացրեց քայլերը Քամու հակառակ հոսանքը
ճնշում եր նրա կուրծքը:

Անձրեաջուրը յերիզներով ծորում եր նրա գլխարկեց
և լճանում ուսերի վրա: Քաղաքի կենտրոնը մնաց հե-
տեւում: Մութը քանի զնում, ալնքան թանձրանում
եր անլուս փողոցներում:

Յերբ Հրաչյա Արմենյանը մտել եր մի մութ և
ամայի նրբափողոց, ֆամին փողոցի մոտ անկյունից
նրա ականջներին խփեց մի ահավոր սուլոց: Հետո
նման սուլոց մլուս կողմից: Ակզրում նրան թվաց թե-

Դա քամու գիշնբալին վայուն ե, բայց զեռ չեր մտուրոշվել է երբ է երկու դարհուրիկի սուլիենսեր ցցվեցին նրա առաջ, միտության մեջ փալեցնելով դանակները: Նրանց գեմքերը փաթաթված եին, միայն յերկու զուրդ աչքեր եին պաղպում իրենց դանակների նման:

Անեն ինչ կատարվեց, մի բոսկյում և անձայն: Նրանցից՝ մեկն ուժեղ մատներով սեղմեց նրա կոկորդը, իսկ մյուսն աճապին փալտով հարվածեց Արմենանի գանդը: Հուստհատ թափառութմերից հետո, Հրաչյան թուլացած տարածվեց ցեխերի մեջ, մեքենա: յի կմախքն ամուր գրկած, Այնուհետև նա վաչինչ չի մացավ, դիմակավորված կերպարանքները դուրս քաշեցին նրա գրկից այնքան սիրելի «Արմեն»-ին, հետո ելի ինչպար թղթեր ու սուրցով անհետացան փողոցի խալարի մեջ:

Անձեւ թափվում եր ու թափվում:

10.

Ենրբ նա աչքերը բաց արավ, իրենց տանն եր: շուրջը նայելիս տեսավ կնոջ արտասովաթոր աչքերը, իրեն այս ու այն կողմ շուռ տվող բժշկին և յերկու բանվոր ընկերների տխուր գեմքերը: Սկզբում նա չեր կարողանում պատահածի մասին իրեն հաշիվ տալ, բայց հետզհետև աղոս կերպով նա մտաքերեց այդ որվա բոլոր անց ու դարձը: Նա հիշեց ինժեների ժպառն գեմքն ու քաջալերիչ խոսքերը... հետո անձեռու փողը հիշեց, յերկու դիմակավորված կերպարանքները, իսկ դրանից հետո նա վոչինչ չկարողացավ պատկերա ցներ ու միայն զգաց, վոր գլխի մեջ զարհուրելի նիշակախաղ ե, ծանր է դլուխը, սարսափելի ծանր:

36

Ուշքի գալուց հետո նա զգաց, վոր ընդմիշտ կորցրել ե իր սիրելի «Արմեն»-ին, իր յերկարատես աշխատանքի արդյունքը:

Ի՞նչ եր մնում անել Հրաչյա Արմենյանին: Ովքեր եին ալդ մարդիկ, ինչու ծեծեցին իրեն, կամ ուր տարան «Արմեն»-ին, նու վոչինչ չդիտեր:

Մի միտք միայի տանջում եր նրան և հիշեցնում, վոր վաղը և յերեկի ընդմիշտ այլևս չի քննվելու նրա գյուտը:

Լուսանում եր,
Բժիշկը նորից ալցելեց հիվանդին ու գնաց: Իսկ Հրանուշ Արմենյանը դեռ աչք չեր կացրել ու վշտահար դեմքով կծկվել եր ամուսնու գլխավերեռում:

11.

Հետեյալ որը հիվանդին տեղափոխեցին հիվանդանց: Գլխի վերքն անընդհատ տանջում եր նրան, Բժիշկների գործ դրած խնամքը շուտով վոտքի կանգնեցրեց նրան, մի շաբաթ անց՝ տուն վերադարձավ, բայց գալկահար, նիհար գեմքով ու դուրս ցցված ալտուկիներով:

Պատահարը հուզեց գործարանի վողջ բանվորությանը, Վոմանք կասկածում եին, վոր գեպքը պատահել և ինժեների անմիջական դեկավորությամբ և ուկրիկների ձեռքով:

Այս միայն կառկած եր: Բայց վոչ վոք վոչնչով չեր կարողանում առացուցել վոր գեպքը կատարվել և խուլիզանների ձեռքով: Մանավանդ Արմենյանի խոսքերից դուրս եր գալիս, վոր չըրագործներն իրեն վիրավորել են զուտ կողոպտելու նպատակով և մեքե-

37

նայի կմախքը տարել են, այն ընդունելով մի թանկագին իրի տեղ:

Ինժեների դրությունն ուշատորե վտանգավոր եր դառնուամ Ամենուրեք նա իր շուրջը փսփուկներ եր լսուամ էրագրերում հանդես յեկան թղթակիցներ, վորոնք գործարանի աչք ծակող բացերը, վասները փաթուամ եյին Սիսակյանի վզին: Դեպքից հետո իուլիպաներին հեռացրին: Այս բանը յեկավ հիշեցնելու վարդան Սիսակյանին, վոր գործերը վատ են զնալու:

* *

Մի որ Հրաչյա Արմենյանը նստած սեղանի առաջ տեղական լրագիրն եր թերթում, նրանից փոքր-ինչ հեռու, կինն զբաղված եր յերեխային հազցնելով: Հանկարծ Արմենյանը վեր թուալ և աչքերը չուց: Հետո քայլեց հետ-առաջու նորից յեկավ նատեց լրագրի առաջ: Աչքերին չճակատալով՝ նա սկսեց կարդալ բարձրաձայն և հատ-հատ.

«Պ. թ. Վ. հայտարերել ե զմասարարների հակահեղափոխական մի կազմակերպություն... ձերբակալված են կազմակերպության ակտիվ անդամներ, ալս, ալս, և գործարանի ինժեներ Վարդան Սիսակյանը».

Կարդալուց հետո նա մի պահ մնաց շվարած: Հետո կամաց կամոց նրա դեմքին ժպիտ իբկավ:

— Այ շան վորդի... արտասանեց նա...
— Այ սրիկա...

Այդ հայտնությունն ասես խորը քնից զարթեց: Նրան Գլխում մի ազոտ լույս շողաց ու անցավ: Նա մռայլեց: Աչքերը մի կետի հառած՝ յերկար ժա-

մանակ չեր շարժվուամ: Քանի մտածում եր, այնքան մերկանում եր իրականությունը:

— Ա՛ սրիկա...

Նա լերկու բռունցքները թափով իջեցրեց սեղանին: Կինը տարակուսած դեմքով նրան եր նայում:

12.

Այդ առավոտ հաղվագեալ առավոտներնց մեկն եր: Գիշերն անձը եր յեկել, իսկ առավոտան ծագած արել տաքացրել եր փողոցները: Ողի մեջ կախվել եր մի անուշ թարմություն:

Ահա այդ առավոտ եր, վոր վողջ գործարանը վուոքի կանգնեց վրդովված: Զկար մի բանվոր, վոր իր սրտում զզվանք չզգար զետի ինժեների արած ստոր դավաճանությունը: Ամենքը զայրացած ելին, ամենքի գենքին վրդովմունքն եր նստել:

— Սրիկան ըսկի զասարարի նման չեր,

— Վոնց ել լավ եր ձեւանում...

— Ո՞վ կարող եր կասկածել վոր լերեսանց ալղքան լավ մարդուց ալղպիսի ցածր դործ կապասի: Ու ըոլորը բարկությամբ գլուխներն ելին շարժում:

Գործարկումը գործարանի բակում բողոքի միտինդ կազմակերպեց: Յուրաքանչյուրը դատափառում եր ինժեների և նրա գործակիցների դավաճանական քալիերը:

— Գնդակահարել...

— Գնդակահարել...

Արձագանգում եր բանվորական մասսան: Այդ մասսան աղմկել գիտե, խնդալ գիտե, այդ մասսան

զարանալ զիտե և իր կուռ շաբքերի մեջ զիտե լսել-
դել իր դաստկարզի թշնամիներին:

- Դնդակահարե՛լ...
- Դնդակահարե՛լ...

Մոնչում եր սկազեմ մասսան և նրա մոնչոցը
սաբուեցուցիչ եր:

Իսկ Արմենյանը՝ նրա գյուտը:
Նա նորից անցավ աշխատանքի, այդ աշխա-
տանքը չեր թուլացել անգամ նրա ջախջախված զըլ-
խում:

Լեռինական, անքստիլ.

Ո Վ Ե Մ Ե Գ Ա Վ Ո Ր

I

Ուշ լերեկո լեր:
Բջախառն քամին թավալում եր փողոցներում
ու թակում գռները:

Ջյունը սառել եր, ջյան սառած հատիկները
անապատի ավաղի նման խշխշում ելին հուսահատ
և լցվում փոսերն ու դիզգում մեկը մյուսի վրա:

Փողոցները դատարկ ելին: Յերբեմն կառքեր ելին
դղրդում փողոցներում ու ձիեր գոփում:

Այդ ամայի ու ձյունաշատ փողոցներից մեկում,
մերթ ձյուների մեջ թավալելով մերթ վեր կենալով
անցնում եր մի մարդ, և քթի տակ ինչ վոր փո-
ղոցային լերգեր սուլում:

Նա հարբած եր:

Այդ մարդու դեմքին մի ապոչ արտահայտւ-
թիւն եր նստել, վորով նա արհամարհում եր և՛ քա-
մին, և՛ ձյունը, և՛ ամայի ըրջապատը: Կանգնելով մի
պատի տակ, վորտեղ բքի հոսանքն անկարող եր մըտ-
նելի նա գուրս հանեց ողու մի լիքը շիշ: Պրեց շըր-
թունքներին և մինչեւ վերջին կաթիւը ծծելով, շիշն
ալնպիսի ուժքնությամբ շպրտեց, վոր վերջինս նույն
վայրկանում փշուր վիշուր լեղավ հեռավոր քարերի
վրա:

— Հետ... շան վորդիք...
 — Կես գիւ... շեր... ըին. . յես ու յարս... սսս...
 Նա քալեց: Քամին դեմ ու դեմ եր նրան: Զյան
 ստուծ հատիկները ծեծում եյին նրա հարբած դեմքը,
 բայց նա ասես վոչինչ չեր զգում, նա հեղնում եր
 և՛ ձյունը, և՛ դատարկ շրջապատը:
 — Յես ձեր հոգուն զուրբան կեղնիմ բիւա...
 — Յես, յես եմ... դուք ինձ...
 — Լոթի տղեն խմե դը, քեփ կենե դը... դուք
 ինձ...
 — Հեյ, լավանդներ...
 — Ու ու ու ու...
 Շաշում եր քամին և ցրում նրա ձախի ալիք-
 ները:
 — Յես... ը՛ը...
 Այս անգամ նա դլրվեց մի փոսի մեջ ու փոտ-
 ները ցցեց. Քամին պտտվեց նրա շուրջը, հավաքեց
 ձյունն ու դիմեց նրա վրա: Նա ծիծաղեց, հետո վեր
 կացավ: Քայլեց, անցավ փողոցները, անցավ տները:
 Առա իրենց տունը, նա թակաւմ է դուռը:
 — Բաց, շան կեֆկ... բաց...
 Նրա ներս զնալուց մի քանի բովե հետո տանից
 լացի ձախեր լսկեցին:
 Դուռը ճոռաց, ճնակոլու մարդը ներս մտավ:
 Բարձրացավ աղմուկ: Հետո իրերը փշրվեցին ու
 լամպը հանգավ: Տունն ընկավ մթության մեջ: Լացի
 ձախերը չելին կտրվում յերկար:

Այդ մարդը մեքենավար Վաչագան Մեքինյանն եր:

II

Կես դիշերին մեքենավար Վաչագան Մեքինյանի
 լուսամուտը թակեցին:
 — Վաչեն...
 Ներսից վոչ մի ձայն:
 — Վաչեն...
 — Զիկում, շան վորդի...—ներսից մոմոաց Մե-
 քինյանը:
 — Արա պոեղ ես... յելի... Օտխօ... հոմեր ձե-
 տի սօրօն տրետի:
 — Պակզզ,—կես զարմացական կես հարցական
 գուաց Մեքինյանը:
 — Հա, պոեղ:
 — Ի՞նչ պոեղ, իշու ջինս...
 — Տո պոեղ, ելի... Ղաֆֆա...
 — Բահհ...
 — Յելի, յելի, մի քնի...
 — Բահհ...
 Մարդու վատնաձախները հեռացան լուսամուտից:
 Նրա զնալուց հետո Մեքինյանն ինչպես վոր յերե-
 սա կնալուց հետո անպես իւրկար ժամա-
 կոյան ընկել եր հատակին, անպես ել յերկար ժամա-
 կոյան շշարժվեց: Հետո թոնթորալով վիր կացավ, նո-
 ռից ծեծեց կնոջն ու յերեխաներին և դուրս յեկավ,
 տունը թողնելով լացի ու իրաբանցման մեջ:
 Դըսում քամին դեռ չեր դադարել: Արշավում եր
 անսանձ ու սուլաւմ, վաշագան Մեքինյանի ուշը վրան
 չեր: Ողու ազդեցությունը դեռ թարմ եր նրա զլիի
 մեջ, բայց ամեն ինչից յերեսում եր, վոր նա ջանք եր
 զործ դիսում ջնջելու ալդ ազդեցությունը:
 Նրա քալերը կարկաս եյին: Պլուխը պտուրտ եր

գալիս, իսկ աչքերի առաջ վոչ մի առարկա կայուն
դիրք չուներ:

Նա գնում եր կայարան: Գնացքն սպասում եր
նրան:

III

Մեքենավարը չկար:

Արգելավարները դժգոհում եին, վոր մեկի յերե-
սից իրենք ստիպված են ժամերով ցրտի տակ մնալ:
Մեքենավարի ողնականն ստուգեց շողեմեքենան,
ամեն ինչ փերջացրեց և հենվելով լուսամուտին՝ ընկավ
անհամբեր սպասումի մեջ:

Գիշերվա կիսից անցել եր, Գնացքն ուշանում եր:
Կայարանի հեթապահի համբերությունն ել հա-
տավ: Այն հ'նա պատրաստվում եր ուրիշ մեքենավար
կանչել տալու, յերբ յերեաց Մեքենանը:

Վերջինս աշխատում եր չցուցանել իր հարբած
լինելը, Քայլում եր ուղիղ, հաստատ, կամ զուցե արդ-
պես եր յերեւմ, վորովհետև մութն եր, իսկ խոսելիս
գեմքն հակառակ կողմն եր թեքում:

— Ընկեր Վաչե, շատ եք ուշացել...

— Բան չկա:

— Վճաց թե, պատասխանատու՝ յեք...

— Ծո լավ ո՞ւ: Մարդ ենք ել՛, որը թեղ կու-
գանք զը, որըմ ուշ...

— Ախր չի կարելի...

— Լավ, ատթօռ տուր,...

— Սա սիմուլանտություն ե...

— Եհա... ուշացել եմ ախպեր... հիմի բնչ կսե-
գը... կոնմմ հետ ուշանա... ըշտա եղածն եղած ե,
քանի շատ խոսես, ենքան ուշանամ զը...

Ու չսպասելով՝ զեպի շողեմեքենան քալից:
— Սրիկա... նրա հետելից զայրացած զոչեց հեր-
թապահը:

Թանի մի ըստելից շողեկառքը սուլից: Վագոն-
ները շարժվեցին և ուղարկը կծկեցին տասնյակ անիվ-
ների ներքո:

Գնացքը հեռանաւմ եր:

IV

Ճանապարհին վաչագան Մեքենանի դրությունը
ծանրացավ: Գլուխն սկսեց ցավել, ձեռքերը թուլա-
նալ, կրծքի տակ ծակոց զգաց, իսկ փոքր ինչ անց
նալ, կրծքի տակ ծակոց զգաց, իսկ փոքր ինչ անց
նալ: Աղու գարշահոտն անտառնելի լիր: Մե-
սիթաը թափից: Աղու գարշահոտն անտառնելի լիր: Մե-
սիթաը թափից: Դեմքը, քինանի աղիքները գալարվում եյին ցավից: Դեմքը,
վոր առաջ յերկաթի նման խըռխտ եր, այժմ դժգու-
նել եր, դեղնել:

— Վաշե, զու հարբած Իս... — հարցրեց ողնա-
կանը:

— Զե, վեզ կսե... փորձեց ստել Մեքենանը:

— Հենց ինչո՞ւ ես ապացուցում:

— Եթիանա ըսեմ... խմել եիս... ուս փորս...

Այն ժամանակ դեկն այս կողմ տուր,.. — վըձ
ուաբար հայտարարեց ողնականն ու շտապեց անցնել
զեկի մոտ:

Մեքենան արհամարհանքով հրեց նրան:

— Գործիդ եղի...

— Բայց կարող ես փորձանքի բերել մնաց...

— Ցես տղամարդ հալովս վոր փորձանքի կզամ,
ոու ինչի՞ չպիտի դաս, լահուա... — արհամարհանքով

Նետեց Մեքինյանն ու փորը բնած՝ կճկվեց պատմուանի մոտ: Գնացքը կատաղի թափով առաջ եր գաղում: Մեքենավարի մաքից յիշել եր, վոր կալարոնին են մոտենում, վոր հարկավոր և թափը դանդաղեցնել:

— Կայարանում կհայտնեմ... նորից խոսեց ողնականը:

— Ի՞նչ...

— Ասում եմ՝ կայարանում կհայտնեմ, վոր դու հարբած եմ...

— Առ քեզ հարբած...

Այս ասելով՝ Վաչագան Մեքինյանը ձեռքի բանալին ուժգնութիւնը զեղի ողնականը նետեց: Դերջինս մի կողմ քաղվեց, վարից հետո յերկաթյա բանտին շառաչելով վշրեց լուսամուտն ու դուրս թռավ:

— Յես քո հոր...

— Սրիկա... կործանվեցինք... կայարանը... սիմափորը փակ ե... դանդաղեցրու...

Գնացքը թռչում եր սրբնթաց:

Շողեմեջենան տվեց աղետի աղդանշանը: Քաշվեցին բոլոր արդելակները, բայց իդուր: Մինչև կայարան մնացել եր հարյուր քալ, այսինչ զնացքի թափը քանի գնում, ախճան սաստկանում եր:

— Ու ու -ու նւ...

— Ու ու ու ու ու...

Գնացքը փախչում եր: Ահա անցավ սիմափորը, ահա կալարան... գծերը լիքն են...

Մեքենավարի ոգնականը քաշում եր սուլիչի ձողն, ու սուլում եր շոգեկառքը, և ոգնութիւնն հայտնում: Մեքինյանի դեմքին գույն չեր մնացել, նա մեկ զեկն եր քաշում, մեկ՝ դուրս նայում..., նա վճռել եր այդ որը մեռնել...

— Ու ու ու ու...

— Շախկ... շրմիկ... շախկ... շրմիկ...

Մի վայրկանում կայարանը շուռ լեկավ, առարկաներն ընկան, մարդիկ վազեցին, ու շոգեկառքեր խփեցին իրար ու բառաչեցին իրկաւ լերկաթիւ ցուլեր: Ճշացին մարդիկ... կամ թռան...

Ընդհանուր սարսափ: Ամեն ինչ վերջացավ:

Գնացքները խորտակվեցին: Աղեխարշ սուլոցներ բարձրացան ու դաշտերը՝ դոփեցին:

Իրարանցում:

V

Լուսանում եք:

Գիշերվա քողի տակից լելավ արևն ու ժպտաց:

Դաշտերի վրա գորշագույն մշուշն եր նստել:

Լուսանում եք:

Յեկան մարդիկ ու աղետի վայրը գիտեցին: Յեկան ոժանդակ գնացքներ, լեկան մարդիկ:

Մեքենավար Վաչագան Մեքինյանի բգկաված զիակը գտան ոելսերի վրա ցիրուցան լեղած: Արյունը լճացել եր ոելսերի մեջ ու սառել: Վոչնչից չեր կարելի տարբերել, վոր մեռնողը մարդ արարած եր, միայն քամին եր ճանաչել այդ մարդուն ու քշել տարել մի մազութու զլիսարկ:

Մեքենավարի սգնականին գտան վիրավոր, ձափի
վատքը՝ ջախջախված։ Նա գունատ եր, դժգույն։

Հետո արգելավարներ գտան վիրավոր, հետո՝ վա-
գոններ ջախջախված, հետո սելսեր տեսան լայնացած,
արյունուա։

Հուսանում եր։

Արևը ձյունապատ սաբից ներքեւ նայեց։

1931 թ. հունվար
Լենինգրան.

ՀԱՐՎԱԾԱՅՑԻՆԸ

I

Ճուրտ եր։

Քամին ձյունի սառած հատիկներով ծեծում եր
նրան ու կատաղի վոռնոցով սլանում դեպի փողոցնե-
րի հեռավոր ծայրամասերը։

Նա սի զեռահաս աղջիկ եր՝ հազիվ տասնութ տա-
րեկան։ Դեմքը թագցը եր կիսամաշ վերարկուի ոձիքի
մեջ և արագ քայլերով ճեղքում եր ձյունախառն քա-
մու հոսանքը։

Թիքվեց վերջին փողոցը և ներս մտավ բանվո-
րական ակումբի լուսավոր դուներից։

Ակումբի հանգստասրահը դատարկ եր։ Միայն
մի քանի լերիտասարդներ դեռ շրխկացնում եյին իրենց
նարդիները։ Նա, ասես, դժգոհ այդ դատարկութիւնից՝
շատապ քայլերով դուրս յեկավ միջանցք, ուր նըան
հանդիպեցին ընկերուհիները։

— Ուշանում ես, ընկեր, — ժալտուլով ասաց նրան-
ցից սեկը։

- Զլինի սկսվել եւ։
- Դեռ չե, բայց կսկսվի շուտով։
- Հարցը նրա մասին եւ։
- Պանների... դե իհարկե՛ դրանից կարեոր թնէ
կա հիմա։

— Ամոթ ե, նւղղակի ամոթ...

Մեջ ընկավ մյուս լերիտասարդ բանվորուհին:

— Ասում են՝ Յերևանի, Բագվի, Թիֆլիսի բանվորությունը վատ կարծիք ունի մեր մասին: Բոլորի աւշադրության կենտրոնը մենք ենք, բոլորը նախատինքով են խսում մեր մասին:

— Ի՞արկե... մեջ մտավ մյուսը:

— Դեռ անցյալ լեռամսալին տասներկու տոկառվ թերակատարում ունեցանք. խոստացանք այս յեռամսակին պարտքը լուցնել, այնինչ խալտառակաբար մի բան ել ավելացրինք հին պարտքի վրա... ուղղակի ամոթ են...

— Հենց այդ մասին կիսունք ալսոր, այ, այս տեղ, — ասավ Աղավնին, մատով ցուց տալով դահլիճը:

— Ասում են կենարոնից մարդ և յեկել:

— Վորտեղի Եց

— Յերևանից:

— Պարզ լերեսով չենք նայի նրան...

Շշնջաց Աղավնին, մյուսների հետ մտնելով դահլիճ.

Ծանր վարագույրը հորանջելով վեր բարձրացավ, Դահլիճը լուց ուշադրությունը փակվեցին: Բազմությունը աչքերը հառեց նախագահության սեղանին, իսկ քիչ հետո կարծես ահոելի մի փոթորիկ ընկավ այդ դրույների ծովի մեջ:

Վորոտաց դահլիճը, Հինգ ըոսկե անընդհատ չեր դագարում վոգնորված ծափահարությունը:

Բեմում կանգնած եր կենտրոնի քարտուղարը, Նա բարձրացրեց ձեռքն ու լուսթիան նշան արեց, բայց ձեռքի այդ շարժումը մի նոր փոթորիկ առաջ բերեց

դահլիճում: Արդեն ընդհատվող ծափահարությունը նո.

բեց ծալը առավ:

Ինտերնացիոնալը թնդացնում եր ակումբի կամարները:

Իսկ յերբ դահլիճը հանդաբավեց, նա սկսեց իր խոսքը հանդաբատ, հանդիսավոր տպա աստիճանաբար հասցրեց այն ցնցող վոգնորության, մի վոդոքություն, վոր թափանցում եր բոլորի սրտերն ու վարակում նրանց:

— Մենք, ընկերներ, պարտք ունենք տալու, լերկրին: Այդ բարձրացող աճող յերկիրն իր պարտքն ե պահանջում: Մենք հրվանդներ, թուլամորթսեր չենք: Մենք կհաղթահարենք դժվարությունները: Կատարել պլանները, նշանակում ե հաստատորնեն գնալ գեղի սոցիալիզմ... Մենք, ընկերներ, պետք ե արշավի յենենք ու վորպես ուղմաղաշում, վորպես անհաղթ մարտիկներ գրավենք բոլոր դժվարամերձ ամրոցները:

— Նորից փոթորկեց դահլիճը, նորից վորոտաց լերկարատե ծափահարությունը:

— Բոլորս գեղի սոցմրցում:

— Կեցէ ի բոյլշիկան հարվածայնությունը:

— Կորչի սիմուլացիան...

Ու լողունգներ, ելին հնչում դահլիճի բոլոր ծալրերից:

— Ընկերներ... արտահատվողներ կան... հարցրեց նախագահը:

— Յես... — կանչեց Աղավնին և վեր ցատկեց տեղից:

Բոլորը դարձան գեղի նա:

Նա արագությամբ բեմ բարձրացավ և կանգ ա-

աավ ամբողջապին շիկնած: Զգիտեր ինչից սկսելու Հետո
վճռական շփեց ճակատն ու գոչեց:

— Այնթ և ընկերներ... վերջ պետք ետալ... Յիս
ինձ հայտարարում եմ հարվածային... հետեւեցէք ինձ...

Նրա ծայնը ծածկեց ծափերի առակ: Նա իջավ
ամբիոնից ու զնաց իր տեղը:

Որինակը վարակեց բոլորին:

Բանվորներն ու բանվորուհիները հերթով բեմ
ելին բարձրանում, դատապարտում ամոթալի թերա-
կատարումը և հարվածային հայտարարում իրենց,
մըցման կանչում մըուներին:

Այդ լերեկո կամքերը թափ տվին իրենց: Իսկ
առավոտյն, յերբ արեք խնդաց լերկրին, և յերկրը
ծիծաղեց քաղաքների ծխաններով, յելան այդ կամքե-
րը, յելան հարձակման և հաղթանակի համար:

II

Որերը, վորպես կոշկի կրունգներ, մաշվեցին ու
նոր որեր կարկատվեցին նրանց տեղ:

Աղավնին տմեն որ կես ժամ շուտ եր գալիս
գործարան: Նա վեց մոքենա լեր աշխատեցնում, և ալզ
վեց մեքենայի վրա ել ծածանվում ելին հարվածա-
նութան կար իր դրոշակները:

— Զարմանալի աղջիկ ե, ախտեր... հոգնել չպի-
տե, հալալ ե, աղնիվ խոսք, հարվածային անունը հա-
լու ե նրան:

— Իսկ յեթե գործարանի բոլոր բանվորներն ել
արտ պես լինելին, են ժամանակ...

— Են ժամանակ «զայոշ» պլանները . .

— Ճիշտ վոր եղանակ ա:

Ու չկար մեկը, վոր հրճվանքով չխոսեր Աղավնու
մասին:

Բոլոր ցեխերի կարմիր տախտակներին գրվեց
նրա անունը: Իսկ մի որ ել տեղական լրագրում ժպտաց
նրա նկարը, տակն ել մի հողմած՝ նրա հերոսական
աշխատանքներին նվիրված:

Մի լերեկո գործարկոմը նվիրատվություններ կա-
տարեց հարվածայիններին: Աղավնին ստացավ մի
զույդ կոշկի, մի կանացի զգեստ:

Այդ առթիվ Աղավնին խնդրեց ավելացնել իր
մեքենաներն ու հիմա աշխատում ե ութ մեքենայի
վրա:

Յեվ աշխատանքի ժամին, լերը մազերը դուրս
ելին սողում նրա կարմիր զլիաշորի տակից, ու քըր-
տընքի կաթիլները մարգարիտի հատիկների պես փալ-
լում ելին նրա ճակատին, նա նայում իր եր մեքենանե-
րի վրա ֆրացող դրոշակներին ու ժպտում:

III

Հինգերորդ ամսին կլանեց վեցերորդը:
Գործարանի պատերին կախված տախտակների
վրա բործացել եր կարմիր գիծը: Պլանները կատար-
ված ելին: Գործարանի պատիվը գրկված եր, ու բան-
վորներն իրար հանդիպում ելին ժպտադեմ, պարզե-
ցար ե զբել սոցիալիզմի կառուցվող շենքի պատերին:

Եթերեկո յեր: Վերջալուսի բոցերի տակ հեռա-
վոր լիոնների ձյունապատ գագաթները արծաթի փալլ
ելին ստացել:

Ժամացույցը խփեց վեց անգամ:

Գործարանի շչակը սուլից բարձր, զիլ՝ ի՞ր յերկաթե կոկորդով; Բանվորները ժրաջան մեղուների պետուրս թափվեցին զանազան դռներից ու ցրվեցին հանգստանալու:

Բամբակի մանր կտորները ասես անհամար սպիտակ թիթիռներ լինելին, վոր թեթևությամբ նստել ելին նրանց ուսերին, զլխարկներին ու կաբճիր գլխաշորերի վրա:

Աղավնին աղատվելով այխատանքից, աշխուլքայլերով դեպի գործարկոմի գրասենյակը դիմեց պատի թերթի մասին խոսելու: Յըրը նա բացեց գուռն ու ներս մատավ գործարկոմի նախագահը դիմավորեց նրան լիադեմ ժպտով:

— Շնորհավորում եմ, ընկեր Աղավնի:

— Ի՞նչ... յես դեռ չեմ ամուսնացել, — ծիծաղելով պատասխանեց նա:

— Ի՞նչ ամուսնություն... ամուսնությունից ել լավ բան: Ու սեղանի դարակից հանեց մի թուղթ, մեկնեց դեպի նա:

— Առ, իմացիր:

Աղավնին շտանք աչքի անցկացրեց թուղթն ու հուղված՝ աչքերը չոեց գործարկոմի նախագահի վրա:

— Անսահման ուրախ եմ..., գոչեց նա:

— Ցեղ թվուրախ չե, մենք բոլորս ել ուրախ ենք քեզ հետ: Քո անձնվեր աշխատանքը չեր կարող վրիպել մեր աչքերից, իսկ արդպիսի աշխատանքը հեռուսական ե: Դե, ընկեր, Աղավնի, հուսով եմ, վոր հաջողություն կունենաս և վերադարձին նույն իեռանդով մեզ հետ միասին կծվես մեր բոլորի գործին:

— Ելծվենք, ընկեր, Արամ, անպատճառ, — թացա-

կանչեց Աղավնին, աշխուլքայլով կըկեց գործարկոմի նախագահին ու սկսեց պտտեցնել նրան սենյակի մեջ:

Գործարկոմի նախագահը հազիվ դուրս պըծտվ նրա ձեռքից:

— Դե գնա, աղջիկս. պատրաստվիր; Վոր յերեք որից հետո մեկնելու իւս:

IV

Թիե գժվար եր, բայց նա հրաժեշտ ավեց իր մեքենաներին: Այն միտքը, վոր ինքը լերկար ժամանակ պիտի կտրվեր իր մեքենաներից, հանգիստ չեր տալիս նրան: Բայց լերը մտածում եր, վոր վերադառնալուց հետո վոչ թե ութ կամ տասը մեքենա պիտի աշխատեցնի, այլ մի ամբողջ ցեխ, գուցե և ամբողջ գործարան... նա կարմիր ինքններ կլինի... արդ միտքը սփոռ փում եր նրան:

Այժմ նրա տեղ չորս բանվորունի ելին աշխատում:

Նա խնդրեց, վոր թողնեն վերջին անգամ ինքն աշխատեցնի իր մեքենաները և արդպիս աշխատելիս ել թողնի ու գնա:

Յերբ նրա ձեռքերը դիպան առաջին մեքենալին, նա գլըդդաց ու սկսեց կարկաչել աղբյուրի նման, ու հոսեց սպիտակ կտավը: Հետո գլըդդաց մեքենան և շարքով՝ բոլոր ութն իրար հետևից: Ապա նա մոտեցավ իրեն փոխարինող բանվորունիներին, սեղմեց նրանց ձեռքն ու ասաց:

— Լավ պահեցեք այդ դրոշակները, դրանք իմ պարծանքներն են...

Նա դուս լեկավ գործարանից:

Մի խումբ բանվոր-բանվորուհներ ուղեկցեցին
նրան մինչև կայարան։ Նրանց հետ եր և դորձարկումի
նախապահը։

Պայքարի ու նվաճումների ընկերները շրջապահել
եյին նրան, խոսում եյին նրա ապագայի մասին, վո-
գելորում ու խնդրում վոր չմոռանա իրենց, միշտ նա-
մակներ գրի։

Հնչեց յերկրորդ զանգը։

Կայարանը հարձանքվեց մարդկանց ալիքներով։

Շոգեկառքը սուլեց, փնչաց, հետո տասնյակ
անիվներ գլորվեցին զուրդ ռելսերի վրաւով։

Դեպի Մոսկվա...

Նա զլուխը հանեց պատուհանից ու հետ նայեց,
դեպի կառամատույցը վորտեղ սպիտակ աղավնիների
պես փոփոռմ եյին ընկերների թաշկինակները։

1931թ. Գեորգի
Լինինական.

ՑԱՆԿ

- | | |
|-------------------|----|
| 1. Կանաչ խղճ | 3 |
| 2. «Արմեն» | 21 |
| 3. Ո՞վ է մեզավորը | 41 |
| 4. Հարփածայինը | 49 |



ՀՀ Ազգային գրադարան



NL0368656

ԳԻՒՅԾ 50 ԿԱՊ. (1⁷/₈ մ.)

55900

СТАФИ
ЗЕЛЕННЫЙ ГОРОД

Госиздат ССР Армении
Эревань—1982

